բարձրադիր բլուրի գագաթից եւ իմ մէջ զարթեցնում էր տխուր յիշողութիւններ: Բնութեան վսեմութիւնը, տեսարանների գեղեցկութիւնը, մասամբ Փարատում էին այդ յիշողութիւնները:

Երբ սկսեցինք բարձրանալ բլուրի զառիվերը, երբ բաւական մօտեցանք քաղաքին, Արփիարը մեզ խորհուրդ տուեց չիջեւանել պանդոկներում, այլ ընտրել մի յարմար կացարան: Բաղէշում Հաջի-Իսաղի պանդոկում լաւ խրատուած լինելով, մենք յօժարութեամբ ընդունեցինք Արփիարի առաջարկութիւնը:

— Բայց ուրիշ ի՞նչ յարմար կացարան կարող էինք գտնել, — հարցրեց Ասլանը:

— Քաղաքի եկեղեցիները աւելորդ սենեակներ ունեն պանդուխտների համար, կարելի է նրանցից մէկը ընտրել, — պատասխանեց Արփիարը:

— Դուք կարծում էք, որ դրանք պանդոկներից լաւ՞ կը լինեն:

— Եթէ լաւ չլինեն, վատ էլ չեն լինի: Միայն այն զանազանութիւնը կայ, որ եկեղեցիների բակերում առանձնացած կը լինենք, իսկ պանդոկներում կը գտնենք մի խառնիճաղանջ բազմութիւն, որոնց մէջ շատ հաճելի չէր լինի մեզ երեւնալ:

Ճանապարհը ոլոր-մոլոր պտոյտներով բարձրանում էր դէպի վեր: Դաշտերից վերադառնում էին մշակները, բահերը ուսի վրայ դրած, այգիներից վերադառնում էին այգեպանները բարձած աւանակներով: Փոշին մարդ էր խեղդում: Աւելի անտանելի էին աւանակները: Երբեմն այդ կամակոր անասուններից մէկը կամ խրտչում էր եւ յամառելով կանգ էր առնում, ճանապարհ էր կտրում, կամ կողքե-կողք շեղուելով, իր վրայ բարձած խաղողի կթոցը զարկում էր մեր ոտներին:

Վերջապէս, մտանք քաղաքի նեղ փողոցների մէջ: Անցնելու տեղ չկար: Մարդ եւ անասուն խառնուել էին միմեանց: Մենք, կարծես թէ, սանդուղքներից էինք բարձրանում, որովհետեւ փողոցները բլուրի զառիվեր դիրքն ունէին: Հայոց թաղերը բաժանուած էին մահմեդականների թաղերից: Այդ արդէն նշան էր, որ այդ տարբեր ազգերը հաշտ դրացիներ չեն եղել: Մենք դիմում էինք դէպի հայոց թաղը:

Երեկոյեան ժամերգութիւնը դեռ նոր էր աւարտուած, դեռ նոր ժամաւորները դուրս էին գալիս, երբ մտանք հայոց եկեղեցիներից մէկի բակը: Մեզ տեսնելով, ժամաւորները կանգ առին եւ խմբուեցան մեր շուրջը: Բաւական ժամանակ տեւեց, մինչեւ եկեղեցու երեցփոխանը յայտնուեցաւ: Դա մի կարճահասակ մարդ էր, որի ընդարձակ, ալեխառն մօրուքը ծածկում էր ամբողջ